ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Գավառ 17.04.2014թ.

Նախագահությամբ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի:

Մասնակցում էին երիտասարդական խորհրդի 46 անդամներից 36-ը, բացակայում էին 10-ը, որից Գեղամ Գյուրջյանը /Ծովակ/, Արման Մարտոյանը/Ծովակ/, Խաչատուր Հովհաննիսյանը /Սարուխան/ և Տարոն Ղուկասյանը /Վ.Գետաշեն/ ՝ անհարգելի պատճառներով:

Նիստին հրավիրվել և մանակցում էին մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանը, կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գ.Բաղալյանը, կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ Գ. Զարվադարյանը, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Հ.Շահբազյանը և լրատվության ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմի հրապարակում:
   / Զեկ. Ս.Խլղաթյան - մարզպետարանի աշխատակազմի ղեկավար/.
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի քարտուղարի ընտրություն:
3. Այլ հարցեր

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ Ս. Խլղաթյանը խորհրդին ներկայացրեց ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2014 թվականի մարտի 31-ի <<Հայաստանի Հանրապետության մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ ստեղծելու, խորհրդի կանոնադրությունը հաստատելու և խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին>> N56-Ա որոշումը և հրապարակեց նույն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմը:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ Արտաշես Մադոյանը /Կարմիրգյուղ/ խորհրդի քարտուղարի համար առաջադրեց Գագիկ Բաղալյանի/Սարուխան/ թեկնածությունը, իսկ Նորիկ Հայրապետյանը/Ակունք/՝ Գեղամ Աթեյանի /Նորատուս/ թեկնածությունը: Բաց քվեարկության արդյունքում Գագիկ Բաղալյանի օգտին քվեարկեցին խորհրդի 8, իսկ Գեղամ Աթեյանի օգտին՝ 28 անդամներ: Ձայների

մեծամասնությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին առընթեր խորհրդի քարտուղար ընտրվեց Գեղամ Աթեյանը:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցան՝

1. Նորիկ Հայրապետյանը/Ակունք/ իր ելույթում անդրադարձավ համայնքներում երիտասարդության պասիվության և անտարբերության հարցերին, առաջարկեց երիտասարդությանը տարբեր միջոցառումներում ներգրավելով՝ խրախուսել վերջիններիս ակտիվությունը:
2. Արազ Սարիբեկյանը /Գավառ/ խոսելով ծնելիության խրախուսման և արտագաղթի կանխման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին, շեշտը դրեց երիտասարդ ընտանիքներին բնակարաններով ապահովման ծրագրերի մշակմանը:
3. Նաիրա Հովսեփյանը /Սևան/ ներկայացնելով Սևան քաղաքի երիատասարդության հիմնահարցերը՝ ընդգծեց մշակույթի տան ջեռուցման խնդրի լուծման անհրաժեշտությունը:
4. Աբով Խաչատրյանը /Գեղհովիտ/ առաջարկեց երիտասարդության ակտիվության դրսևորման համար ստեղծել նպաստավոր պայմաններ և խորհրդի աշխատանքները լուսաբանելու ու առավել արդյունավետ դարձնելու համար ստեղծել ֆեյսբուքյան խումբ:

Խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ռ.Գիրգորյանը:

Հանձնարարվեց՝

1. Մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդին՝

1) համագործակցել մարզի համայնքների ղեկավարների հետ, ուսումնասիրել մարզի երիտասարդության հիմնախնդիրները, նշել դրանց լուծման ուղիները և դրանք ներառել մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի տարեկան աշխատանքային ծրագրում.
2) մշակել և խորհրդի նախագահին ներկայացնել մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի աշխատակարգը և տարեկան աշխատանքային

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գ.ԱԹԵՅԱՆ